

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՈԼՈՐՏՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ**

Ըստ փորձագիտական գնահատումների տարեկան շահագործվող հանքավայրերի բավական մեծ մասն իրացվում է ապօրինաբար, բնականաբար գտնվելով հարկման դաշտից դուրս: Հայաստանի Հանրապետությունը որպես ընդերքի միակ և բացառիկ սեփականատեր, ներկայումս ունի ֆինանսավորումը դժվարություններ՝ իր սեփականության իրավունքը պատշաճ կերպով իրականացնելու համար: Պետական բյուջեից ֆինանսավորումը, մասնավորապես երկրաբանական ուսումնասիրությունների և ընդերքի կառավարման համար, սահմանափակ է և Հայաստանի Հանրապետության ընդերքը պետության աջակցության մեծ կարիք ունի: Ներկայումս երկրաբանահետախուզական աշխատանքներից երկրաֆիզիկական, երկրաքիմիական, հիդրոերկրաբանական, ինժեներաերկրաբանական, հետախուզական, մանրակրկիտ հետախուզական, հանքավայրերի գույքագրման կամ մոնիտորինգի վարման համար պետական բյուջեից միջոցներ չեն տրամադրվում: Այս փաստը ինչ-որ չափով բացատրում է համակարգում գոյություն ունեցող տարբեր անօրինականությունները և ապօրինի գործողությունները: Արդյունքում, երկրաբանության ոլորտը և պետությունը կորցնում են նյութական և ֆինանսական միջոցներ:

Հանքարդյունաբերությունը տնտեսության գերակա ճյուղ հայտարարելուց հետո ՀՀ կառավարությունը մեկը մյուսի հետևից սկսեց տարեկան տասնյակ հանքերի շահագործման լիցենզիաներ տալ և 2015թ-ի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ 29.000 քվմ տարածքում տրված օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունքները կազմում են 468 և դրանք շարունակում է աճել:¹

Հանքարդյունաբերությունը որպես տնտեսական գերակայություն ամրագրվեց նաև 2008թ. ՀՀ կառավարության կողմից հաստատված Կայուն զարգացման ծրագրում, որն ըստ էության Հայաստանի սոցիալ-տնտեսական պետական ծրագիրն է: Դրան հաջորդեց հանքային արդյունաբերության հետ կապված օրենսդրության փոփոխությունը, մասնավորապես Ընդերքի մասին նոր ՀՀ օրենսգրքի հաստատումը 2010թ-ին, որն իրականացվեց Համաշխարհային Բան-

¹ <http://minenergy.am/page/422>

կի օժանդակությամբ (կամ ճնշման ներքո) և Հայաստանում «դրախտային» պայմաններ ապահովեց հանքարդյունահանող ընկերությունների համար՝ ցածր հարկեր ու բնապահպանական վճարներ, ոչ մի պատասխանատվություն թափոնների համար, նվազագույն պետական վերահսկողություն և այլն: Թափոնների տեղադրման վերաբերյալ կարող ենք նշել, որ «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքով թափոնների տեղադրման համար վճարները սահմանվում են՝ ըստ վերջիններիս վտանգավորության աստիճանի՝ 4-ից մինչև 1-ին դասի, համապատասխանաբար 1500 դրամից մինչև 48000 դրամ/տոննա դրույքաչափերով, ինչպես նաև ոչ վտանգավոր թափոնների համար՝ 600 դրամ/տոննա և հողածածկույթի քանդման և շինարարության հետևանքով առաջացած ոչ վտանգավոր թափոնների համար՝ 60 դրամ/տոննա դրույքաչափով: Միևնույն ժամանակ, ըստ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների, Հայաստանում 2013 թ. արտադրված թափոնների 99.66 %-ը բաժին է ընկնում Սյունիքի մարզին, որի հիմնական աղբյուրը հանքարդյունաբերությունն է:² Սակայն վերը նշված «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքով՝ լեռնարդյունահանող իրավաբանական անձանց կողմից առաջացած թափոնների համար սահմանված է 0 դրամ դրույքաչափ: Եթե նույնիսկ հաշվի չառնենք լեռնարդյունաբերության թափոնների վտանգավորության աստիճանը՝ պայմանավորված վերջիններիս մեջ վտանգավոր միացություններով, և այս ամենը հարկվեր գործող ամենացածր դրույքաչափով, ապա միայն 2010 թ. այս մասով պետական բյուջե կնուտքագրվեր առնվազն 10 մլրդ դրամ գումար, այսինքն՝ ավելի շատ, քան Հայաստանի Հանրապետությունում հավաքագրված բոլոր բնապահպանական և բնօգտագործման վճարները միասին վերցված (մթնոլորտային օդի մեքենաներից և գործարաններից աղտոտում, ջրերի աղտոտում, թափոնների տեղադրում, շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների արտադրում և ներմուծում, կենսառեսուրսների, ջրային ռեսուրսների օգտագործում, պինդ օգտակար հանածոների, աղի և ստորգետնյա հանքային ջրերի օգտագործում), որն 2013 թվականին կազմել է 1 մլրդ 930 մլն ՀՀ դրամ: Փաստենք նաև, որ 2013 թվականին բնական պաշարների օգտագործման դիմաց վճարը կազմել է ընդամենը 1 մլրդ 224 մլն ՀՀ դրամ: Բնօգտագործման դիմաց ստացված վճարների 69,1%-ը կազմել է օգտակար հանա-

² <http://armstat.am/file/doc/99489218.pdf>

ծոների արդյունահանման դիմաց գանձվող վճարների:³ 2013 թ.-ին արդյունաբերության մեջ հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման մասնաբաժինը կազմում է 15.8%-ը:⁴

Ընդերքի նոր օրենսգրքով լեռնարդյունաբերության թափոնները փոխարինվել են ոչինչ չասող «Լցակայաններ» բառով՝ «չկա թափոն-չկա թափոնի տեղադրման համար վճար» սկզբունքով: Սակայն սա միայն հանքարդյունաբերության արտոնյալ կարգավիճակի առաջին բաղադրիչն է: 1998թ. դեկտեմբերի 30-ին ընդունվեց «Բնօգտագործման վճարի դրույքաչափերի մասին» ՀՀ կառավարության թիվ 864 Ն որոշումը, որով դրույքաչափեր սահմանվեցին բնական ռեսուրսների օգտագործման համար՝ մասնավորապես ազնիվ և գունավոր մետաղների համար:

Հաշվի առնելով, որ այն ժամանակ հիմնական հանքարդյունաբերական ձեռնարկությունները պետության սեփականությունն էին, և սահմանված վճարները պետության մեկ գրպանից մյուս գրպանը տեղափոխվող գումարներ էին՝ վերոհիշյալ մետաղների համար սահմանվեց աշխարհում գոյություն ունեցող նվազագույն վճարներից մեկը՝ շուկայական գնի 1-1.5 %-ի չափով:

Համեմատելով այս չափը մետաղական հանածոներով հարուստ երկրների հետ՝ կարող ենք տեսնել, որ Հայաստանը այս առումով զիջում է սկզբունքորեն բոլորին: Օրինակ՝ Ռուսաստանում այն կազմում է 3.8-8.3 %, Կանադայում՝ 10-16 %: Չիլիում, որը պղնձի արդյունահանման առաջատարներից մեկն է, պետության բացառիկ սեփականությունը հանդիսացող ռեսուրսի շահագործման համար տնտեսվարողները բնօգտագործման վճարի տեսքով վճարում են 5-14%, Կոլումբիայում՝ 4-6%, Հարավային Աֆրիկայում՝ 10%, Ավստրալիայում՝ մինչև 4.5%:⁵

Ներկայում գործող բնօգտագործման և բնապահպանական վճարների համակարգի կատարելագործման ճանապարհով գնալու փոխարեն, ներկայացված օրենսգրքի նախագծով ընդհանրապես հանվել են մետաղական հանածոների համար վճարվող բնօգտագործման վճարները, որոնք փոխարինվելու են «ռոյալթիով» հասույթի հիման վրա հաշվարկվող վճարատեսակով:

Սակայն միջազգային փորձը ցույց է տալիս, ռոյալթիի կիրառումը արդյունավետ է միայն այն դեպքերում, երբ պետությունը կամ պետական մասնաբաժնով ձեռնարկություններն են հանքերի

³ <http://armstat.am/file/doc/99489218.pdf>

⁴ <http://armstat.am/file/doc/99489228.pdf>

⁵ Шевчук А.В. Экономика природопользования: теория и практика. -М.: НИИ-Природа, 2010, 210 с.

շահագործողը: Մնացած դեպքերում բնօգտագործման վճարի կիրառումը բոլոր առումներով առավել նպատակահարմար է համարվում: Բազմաթիվ երկրներում բնօգտագործման վճարը կիրառվում է ռոյալթիի հետ մեկտեղ, որտեղ բնօգտագործման վճարը համարվում է պետության բացառիկ սեփականություն համարվող ռեսուրսի օգտագործման վճար, իսկ ռոյալթին՝ գերշահույթներ ապահովող ոլորտից վճարվող լրացուցիչ հարկատեսակ:

Ներկայացված նոր ընդերքի օրենսգրքի նախագծում նշված է, որ ռոյալթիի հաշվարկման բազան՝ հանքաքար, խտանյութ, ձուլվածք կամ վերամշակման արդյունքում ստացված ցանկացած վերջնական արտադրանքն է, որը առաջին հերթին ենթադրում է, որ հանքարդյունաբերողը կվճարի իրեն հարմար այս չորս տարբերակից մեկով, և երկրորդը՝ այն իրականում խթանում է, որ հանքարդյունահանողները վաճառեն առաջին փուլի արտադրանքը՝ հանքարարը, հարկման ցածր բազա ունենալու համար, այսինքն՝ խթանում է ռեսուրսային մոտեցումը և ոչ վերջնական արտադրանքը, քանի որ վերջինիս հարկման բազան ավելի մեծ է ստացվում՝ ի հակակշիռ միջազգային փորձի, որտեղ, օրինակ, եթե հանքարդյունաբերողը վաճառում է խտանյութը հանքաքարի փոխարեն, ապա բնօգտագործման վճարից կատարվում է 20 % գեղջ:

Նոր օրենսգրքի նախագծով շահութաբերության համար նախատեսված 25 % նորման հիմնավորված չէ: Ցավալի է փաստել, սակայն, ըստ նոր օրենսգրքի նախագծի՝ եթե երկու հանքարդյունաբերողներ արդյունահանում են միևնույն քանակի բնական ռեսուրս, որոնցից մեկը, անգրագետ կառավարման կամ հարկերից խուսափելու պատճառով, օրինակ, ստանում է նվազագույն հաշվարկման բազա, իսկ մյուսը՝ վերամշակման, արդյունավետ կառավարման և այլ գործոնների հետևանքով, ավելի բարձր բազա, ապա նույն ծավալի ռեսուրսի համար առաջինը վճարում է ավելի ցածր գին ազդելով նաև մրցակցության վրա:

Նախագիծը ունի նաև կոնցեպտուալ խնդիր: Եթե բնօգտագործման վճարը տնտեսական խթանման միջոց է և ազդելով հանքարդյունաբերողի վարքի վրա՝ ստիպում է նրան առավել արդյունավետ արդյունահանել մետաղական հանածոն (ավելի քիչ բնօգտագործման վճար վճարելու համար), ապա նոր նախագծով շրջակա միջավայրի կառավարման այս տնտեսական մեխանիզմը դուրս է գալիս, և գործում է միայն ֆինանսական մեխանիզմը, այսինքն՝ էական չէ, թե ինչքան բնական ռեսուրս են օգտագործում, էական է ֆինանսական մեխանիզմը:

Օրենսգրքի նախագծով հարկային մարմինների և հանքարդյունաբերողների միջև հարկային բազայի մասին բանակցելու հնարավորությունը իրականում կոռուպցիոն հսկայական ռիսկեր է պարունակում, առավել ևս որ հաջորդ կետով հարկային մարմինների իրավասությունները սահմանափակվում են հաշվարկման բազայի համար պայմանագրերի վրա հիմնվելու անհրաժեշտությամբ: Սա նշանակում է, որ եթե նույնիսկ պղնձի միջազգային գները գտնվեն 10.000 ԱՄՆ դոլար/տոննա սահմաններում, եթե տնտեսվարողը, ցանկանալով նվազեցնել իր հարկման բազան, վաճառի ռեսուրսը մի քանի անգամ ցածր գնով, միևնույն է՝ հարկային մարմինները հաշվարկման բազայի համար հիմք կարող են ընդունել միայն պայմանագրերը:

Այսօր հանքարդյունաբերությունում առկա են խնդիրներ, որոնք լուծման կարիք ունեն.

1. Լեռնամետալուրգիայի թափոնները պետք է դասակարգվեն և մտցվեն հարկման դաշտ՝ ապահովելով լրացուցիչ ֆինանսական միջոցներ և լինելով ռեսուրսների ռացիոնալ օգտագործման գործիք,
2. Ռոյալթիները պետք է ոչ թե փոխարինեն բնօգտագործման վճարներին, այլ լրացնեն. առնվազն առաջիկա տարիների համար այս երկու վճարատեսակները պետք է հանդես գան միասին,
3. Բնօգտագործման վճարների դրույքաչափերը պետք է հիմնված լինեն ռեսուրսների շուկայական գների վրա, իսկ դրանց բացակայության դեպքում՝ էկոլոգոտնտեսական հաշվարկների հիման վրա,
4. Բնապահպանական վճարների դրույքաչափերը պետք է հիմնված լինեն շրջակա միջավայրին, մարդու առողջությանը հասցված իրական վնասի գնահատման հիման վրա,
5. Հանքանյութը, խտանյութը, ծուլվածքը և բնական ռեսուրսից ստացված վերջնական ապրանքը արտահանվելիս պարտադիր պետք է մաքսազերծվեն, ընդ որում՝ արտադրական ամեն հաջորդ փուլի դեպքում ավելի ցածր դրույքաչափով,
6. Ռոյալթիների հարկման բազայի հիմք ընդունել միջազգային գները և բացառել բանակցությունները հանքարդյունաբերողների և հարկային մարմինների միջև:

Հայաստանում երկրաբանության ոլորտի ֆինանսավորման համակարգը պետք է վերանայվի: Այս բնագավառում պետական կառավարումը նախկինում իրականացվում էր վարչարարական

մեթոդներով ընդունված կարճաժամկետ և զարգացման հեռանկարային պլանների հիման վրա: Ժամանակակից շուկայական տնտեսության պայմաններում, երբ բոլոր արդյունաբերական ձեռնարկությունները սեփականաշնորհված են և գործում են որպես ինքնուրույն սուբյեկտներ, այդպիսի մոտեցումը ոչ միայն հնարավոր չէ, այլ նաև պետք չէ:

Պետությունը պետք է ոչ միայն հսկի ընդերքօգտագործման գործընթացը, այլ նաև ողողողի ցանկացած ուղղությամբ ոչ վարչարարական կարգի նպատակալաց գործողությունների միջոցով՝ իրավական դաշտի և պետական կառավարման մարմինների կառուցվածքի կատարելագործմամբ, ընդերքի օգտագործման առանձին տեսակների շահագործման պայմաններ ստեղծելով: Բացի դրանից մեծ է պետության դերը ընդերքի երկրաբանական ուսումնասիրության գործում:

Այս գործողությունները կարող են բավարար արդյունավետ լինել, եթե դրանք իրականացվեն դիտարկվող բնագավառի համար սահմանված կարգով մշակված և ընդունված պետական կառավարման ռազմավարության համաձայն:

АННОТАЦИЯ

Ашот Мардоян, к.э.н., доцент

ПРОЯВЛЕНИЯ ГОСУДАРСТВЕННОЙ ПОЛИТИКИ В СФЕРЕ НЕДРОПОЛЬЗОВАНИЯ В РА

В пределах статьи рассмотрено текущее состояние государственной политики в сфере горной промышленности, описана неэффективная деятельность государственных органов и предложены решения с целью урегулирования данной сферы.

ANNOTATION

Ashot Mardoyan, PhD, associate professor

STATE POLICY MANIFESTATIONS IN THE FIELD OF MINERAL RESOURCES IN THE REPUBLIC OF ARMENIA

The article presents an analysis of the current state policy implemented in the field of mineral resources in the Republic of Armenia. The article gives a description of the ineffective activities of the state authorities and suggests solutions for improving the situation in the field.